ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Գյուղատնտեսական Դաշինքի

_____, 2016 թ. Նիստի որոշմամբ

Գյուղատնտեսական Դաշինքի

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ – 2016թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսական Դաշինքի (այսուհետ՝ Դաշինք) կազմավորման նպատակները, իրավասությունները, նրա կողմից իրականացվող գործառույթները, գործունեության և որոշումների ընդունման ընթացակարգերը, կարգավորվում են Դաշինքին անդամակցելու, ինչպես նաև անդամակցության դադարեցման գործընթացները: Սահմանվում են նաև անդամ կազմակերպությունների ղեկավարների և այլ աշխատակիցների պարտականությունները Դաշինքի բնականոն գործունեության ապահովման նպատակով:

1.2. Դաշինքը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնակարգի հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

1.4. Դաշինքի անվանումն է՝

- հայերեն՝ Գյուղատնտեսական դաշինք, հայերեն կրճատ անվանումը՝ ԳԴ,

- անգլերեն՝ Agricultural Alliance, անգլերեն կրճատ անվանումը՝ AA,

- ռուսերեն՝ Сельскохозяйственный альянс, ռուսերեն կրճատ անվանումը՝ CA,

1.5 Դաշինքի լոգոյի գունավոր պատկերը ներկայացվում է սույն կանոնակարգի բաղկացուցիչ մաս կազմող թիվ 1 հավելվածում:

1.5.1 Դաշինքի լոգոն պետք է օգտագործվի միայն Դաշինքի հետ համաձայնության առկայության դեպքում:

Դաշինքի նպատակները

1.6. Դաշինքը շահագրգիռ կազմակերպությունների կողմից կամավորության սկզբունքով ձևավորված ազգային բաց հարթակ է, որը նպատակ ունի գյուղատնտեսության ոլորտում ձևավորել համատեղ գործընկերություն, հանդես գալ նախաձեռնություններով և աշխատանք իրականացնել գյուղատնտեսության ոլորտում: Դաշինքը միավորում է գյուտատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող միջազգային և տեղական կազմակերպությունների, որոնք համախմբվել են.

1.6.1. Գտնել գործուն մեխանիզմեր և համատեղել գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված մարդկային ու ֆինանսական ռեսուրսները

1.6.2. Կազմակերպել համատեղ լոբբինգ և շահերի պաշտպանություն երկրի գյուղատնտեսական քաղաքականության մշակման գործում

1.6.3. Իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում

1.7. Դաշինքն իր ջանքերը ուղղելու է հետևյալ խնդիրների լուծմանն աջակցելուն.

1.7.1. Գյուղատնտեսության ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, տնտեսավարողների գործունեության պայմանների բարելավման, արժեքային շղթայի արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն

1.7.2. Ագրարային ոլորտում մասնագիտական գիտելիքների պակաս, խորհրդատվական համակարգի բարելավման, նորարարական տեխնոլոգիաների հասանելիության բարձրացման, ոլորտի մարդկային ռեսուրսների ապահովման և արդյունավետության բարձրացման, ոլորտի վերաբերյալ տեղեկատվության տարածման և փոխանակման, նպատակային վերլուծությունների անհրաժեշտություն

1.7.3. Սերմնաբուծության, տոհմային անասնաբուծության համակարգի անկատարություն, դրա զարգացման գործուն մեխանիզմների ստեղծման անհրաժեշտություն

1.7.4. Գյուղացիական տնտեսությունների համար մատչելի ֆինանսական ծառայությունների հասանելիության ապահովում, այդ թվում վարկավորման և լիզինգային ծառայությունների պայմանների բարելավում

1.7.5. Ազատ տնտեսական գոտիներին սահմանամերձ համայնքների ինտեգրման անհրաժեշտություն,

1.7.6. Բնական աղետներից գյուղատնտեսական ռիսկերի մեղմացման համար բերքի և գյուղատնտեսական կենդանիների ապահովագրության համակարգի ներդրման անհրաժեշտություն

1.7.7. Գյուղատնտեսական արտադրանքի որակը և անվտանգությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն

1.7.8. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենսդրական դաշտի բարելավում, կոոպերատիվների ձևավորման, կառավարման և խթանման հրատապությունն ու բարենպաստ պայմանների ստեղծում:

2. ԴԱՇԻՆՔԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԸ, ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ և ԱՎԱՐՏԸ

2.1. Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսական Դաշինքը կազմավորվել է ՀՀ-ում Գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումները, որպես իրենց նպատակ սահմանած կազմակերպությունների կամավոր մասնակցությամբ:

2.2. Դաշինքն ունի անդամակցության երկու տեսակ՝ Հիմնական անդամ և Ասոցացված անդամ

2.3. Հիմնական անդամների իրավունքներն ու պարտականությունները.

Դաշինքի հիմնական անդամը.

2.3.1. Ստորագրում է փոխըմբռման հուշագիր

2.3.2. Մասնակցում է որոշումների կայացման գործընթացներին

2.3.3. Ըստ սահմանված կարգի մասնակցում է Դաշինքի հանդիպումներին

2.3.4. Ներկայացվում է Դաշինիքի կողմից հրապարակվող տեղեկատվական թերթիկներում և սոցիալական ցանցերում

2.3.5. Հիմնական անդամներից, ռոտացիոն կարգով, ձևավորում է Դաշինքի նախագահությունը:

2.4. Ասոցացված անդամների իրավունքներն ու պարտականությունները

Դաշինքի ասոցացված անդամը.

2.4 .1. Մասնակցում է դաշինքի ժողովներին ըստ սահմանված կարգի

2.4 .2. Ունի խորհրդատվական դեր

2.4 .3. Ներկայացվում է Դաշինիքի կողմից հրապարակվող տեղեկատվական թերթիկներում և սոցիալական ցանցերում

2.4 .4. Կարող է մասնակցել որոշումների կայացման գործընթացներին, հայտնել իր կարծիքն ու դիրքորոշումը

2.4 .5. Կարող է իր որոշմամբ միանալ Դաշինքի հայտարարություններին

2.4 .6. Չի կարող մասնակցել քվերակություններին

2.4 .7. Չի կարող ընտրվել որպես համանախագահող:

2.5. Կազմակերպությունները Դաշինքի աշխատանքներին մասնակցում են Կազմակերպությունների Ղեկավարների, ինչպես նաև այդ ղեկավարների կողմից լիազորված անձանց միջոցով:

2.6. Կազմակերպության Դաշինքի աշխատանքներին մասնակցության ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

2.7. Դաշինքին նոր՝ հիմնական և ասոցացված անդամների անդամակցության համար սահմանվում է հետևյալ գործընթացը

- Դաշինքին անդամակցել ցանկացող կազմակերպությունը ներկայացնում է իր իրավասու մարմնի կողմից ստորագրված գրավոր դիմում դաշինքին մասնակցելու իր ցանկության, ինչպես նաև մասնակցության տեսակի (հիմնական կամ ասոցացված անդամ)վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ իր գործունեության վերաբերյալ և Դաշինքի կանոնակարգին համակարծիք լինելու մասին տեղեկանք ստորագրված դիմող կազմակերպության լիազոր մարմնի կողմից:
- Դաշինքի անդամ կազմակերպություններից առնվազն մեկը տրամադրում է տվյալ կազմակերպության անդամությունն երաշխավորող նամակ:
- Դաշինքին անդամակցության հարցի քննարկվում է Դաշինքի հերթական հանդիպման ժամանակ:
- Դաշինքին անդամակցության վերջնական հաստատումը կատարվում է քվեարկության միջոցով՝ հանդիպմանը ներկա Դաշինքի բոլոր հիմնական անդամների ձայների առնվազն 2/3-ով:
- Քվեարկության դրական արդյունքից հետո նոր անդամ կազմակերպության լիազոր անձը ստորագրում է Դաշինքի փոխըմբռնման հուշագիրը, որից հետո միայն կարող է համարվել Դաշինքի լիիրավ անդամ:

2.8. Դաշինքին անդամակցության դադարեցման համար սահմանվում է հետևյալը:

- Կազմակերպությունը կարող է Դաշինքից դուրս գալ սեփական ցանկությամբ՝ այդ մասին գրավոր տեղյալ պահելով Դաշինքի այլ անդամներին
- Դաշինքի անդամները կարող են դադարեցնել տվյալ կազմակերպության անդամությունը Դաշինքին, եթե կազմակերպությունը բացակայել է Դաշինքի հանդիպումներին առնվազն 3 անգամ անընդմեջ:
- Դաշինքի անդամները կարող են դադարեցնել տվյալ կազմակերպության անդամությունը Դաշինքին, եթե անդամ կազմակերպության իրականացված գործունեությունը բացասականորեն է ազդել Դաշինքի գործունեության և համբավի վրա:
- Բացի սեփական ցանկության դեպքից բոլոր այլ դեպքերում Դաշինքին անդամակցության դադարեցման հաստատումը կատարվում է քվեարկության միջոցով՝ ձայների առնվազն 2/3-ով:

3. ԴԱՇԻՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Դաշինքի կառավարման մարմիններն են՝ դաշինքի անդամների ընդհանուր ժողովը, համանախագահողների խորհուրդը և դաշինքի համակարգողը:

3.2. Դաշինքի կառավարման գերագույն մարմին է հանդիսանում դաշինքի անդամների ընդհանուր ժողովը:

4. ԴԱՇԻՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաշինքի անդամների ընդհանուր ժողովը

Դաշինքի անդամների ընհանուր ժողովին մասնակցում են Դաշինքի հիմնական անդամ կազմակերպության ղեկավարները կամ նրանց կողմից լիազորված անձիք: Դաշինքի Ընդհանուր ժողովին է որոշում Դաշինքի կառավարման կարգը

/կետ 3/, ժողովին է վերապահված Դաշինքի լուծարման կամ վերակազմավորման իրավունքը / կետ 8/ :

Դաշինքի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը համարվում է վավեր, եթե ժողովին ներկա են Դաշինքի հիմնական ադամ կազմակերպությունների 70%-ը :

4.1. ԴԱՇԻՆՔԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1.1 Ընթացիկ կառավարումն ապահովելու նպատակով՝ Դաշինքն ունի կառավարման խորհուրդ, որը բաղկացած է Դաշինքի հիմնական անդամ հանդիսացող երեք կազմակերպությունից,

4.1.2 Դաշինքի համանախագահներն ընտրվում են ռոտացիոն կարգով՝ առնվազն 3 ամիս , բայց ոչ ավել, քան 9 ամիս ժամկետով,

4.1.3 Հանախագահողներն ընտրվում են Դաշինքի ընդհանուր ժողովի կողմից քվերակության միջոցով՝ ձայների առնվազն 2/3-ով, երբ ներկա է Դաշինքի հիմնական անդամ կազմակերպությունների առնվազն 80 %-ը:

4.2. ԴԱՇԻՆՔԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.2.1 Ներկայցնել Դաշինքը այլ կազմակերպություններում և հարթակներում, ինչպես նաև տարբեր ձևաչափի հանդիպումների ընթացքում, ներկայացուցչական հանդիպումների, ժողովների ժամանակ,

4.2.2 Դաշինքի անունից վարել բանակցություններ, ստորագրել փաստաթղթեր, պայմանագրեր և այլն:

4.2.3 Ապահովել ընդհանուր ժողովի կողմից հաստատված դաշինքի գործունեության պլանի իրականացումը:

5. ԴԱՇԻՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԸ

5.1. Դաշինքի համակարգողն ընտրվում է Դաշինքի ընդհանուր ժողովի կողմից քվեարկության միջոցով՝ ձայների առնվազն 2/3-ով: Դաշինքի համակարգողի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Դաշինքի ընդհանուր ժողովի որոշմամբ:

5.2. Դաշինքի համակարգողի իրավասություններն ու պարտականությունները.

5.2.1 Կազմակերպել Դաշինքի ամսական, հերթական ժողովները

5.2.2 Մասնակցել դաշինքի ժողովներին և կազմել արձանագրություններ, կազմել տարեկան հաշվետվություն և ներկայացնել Դաշինքի տարեկան ամփոփիչ ժողովին

5.2.3 Դաշինքի Համակարգողը պատասխանատվություն է կրում հանդիպումը արձանագրելու և արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության և ամբողջականության համար:

5.2.4 Էլ. փոստի միջոցով տարածել անհրաժեշտ տեղեկություններ Դաշինքի անդամներին

5.2.5 Պոտենցիալ անդամների և նրանց ծրագրերի մասին տեղեկացել Դաշինքին

5.2.6 Մշտապես կապ պաշտպանել աշխատանքային խմբերի հետ

5.2.7 Համակարգել Դաշինքի կողմից կազմակերպվող միջոցառումները

5.2.8 Ստեղծել Դաշինքի բազա՝ անհրաժեշտ փաստաթղթերով, օրենքներով, կանոնակարգերով

5.2.9 Վարել ստացվող և ուղարկվող տպագիր և էլեկտրոնային թղթակցությունը և նամակագրությունը, նրանց հաշվառումը, համակարգել և պահպանել ընթացիկ արխիվի փաստաթղթերը

5.2.10 Հետևել/ապահովել Դաշինքի կողմից ընդունված կանոնակարգերի կիրարկմանը, ինչպես նաև կայացված որոշումների իրականացմանը և պլանավորված աշխատանքների ժամանակին կատարմանը

5.2.11 Ապահովել Դաշինքի տեսանելիությունը սոց. ցանցերում համապատասխան հայտարարությունների, հոդվածների և կարծիքների հրապարակման միջոցով

5.2.12 Պարբերաբար կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ ՀՀ Գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ և դաշինքի քննարկմանը ներկայացնել լուծման առաջարկություններ,

5.2.13 Դաշինքի հայտարարությունների, հայեցակարգային և այլ հետազոտական նյութերի հստակեցման նպատակով հանդիպել մասնագիտական, ոլորտային հանձնաժողովներին և ասոցիացիաներին

5.2.14 Կատարել դաշինքի աշխատանքների համակարգման և կազմակերպման հետ կապված այլ պարտականություններ:

5.2.15 Դաշինքի համաձայնությամբ և ըստ անհրաժեշտության ներգրավվել մարդկային/նյութական ռեսուրսներ դաշինքի բնականոն գործունեության ապահովման նպատակով:

6. ԴԱՇԻՆՔԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6.1 Դաշինքի ընդհանուր ժողովն իր աշխատանքներն իրականացնում է հանդիպումների միջոցով: Հանդիպումները կարող են լինել հերթական և արտահերթ:

6.2 Հերթական հանդիպումները տեղի են ունենում առնվազն ամիսը մեկ անգամ:

6.3 Դաշինքի արտահերթ հանդիպումները կարող են հրավիրվել անդամ կազմակերպություններից ցանկացածի կողմից, այդ մասին տեղյակ պահելով Դաշինքի բոլոր անդամ կազմակերպություններին ուղղակիորեն, ինչպես նաև այդ ամսվա համանախագահող կազմակերպության միջոցով:

6.4 Դաշինքի հանդիպումներն անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ:

6.5 Հանդիպման օրակարգը կազմվում և ուղարկվում է Դաշինքի բոլոր անդամներին՝ հանդիպումից առնվազն երկու օր առաջ ներկայացվում է Դաշինքի Համակարգողի կողմից, իսկ արտահերթ հանդիպման դեպքում հանդիպումը նախաձեռնող կազմակերպության և Դաշինքի Համակարգողի հետ համատեղ:

6.6 Դաշինքի հանդիպումներին ձայնի իրավունքով կարող է մասնակցել Անդամ կազմակերպությունների ղեկավարները կամ տվյալ կազմակերպության կողմից լիազորված ներկայացուցիչները: Դաշինքի հանդիպմանը կարող են հրավիրվել նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչներ, անհատներ և փորձագետներ, ում ձայնը որոշումներ ընդունելիս կարող է դիտվել որպես խորհրդակցական:

6.7 Դաշինքի հանդիպումները համարվում են իրավազոր որոշում ընդունելու համար, եթե հանդիպմանը մասնակցում է անդամ կազմակերպությունների ընդհանուր թվի առնվազն 60 տոկոսը:

6.8 Դաշինքի որոշումները ընդունվում են հանդիպմանը ներկա հիմնական անդամների թվի ձայների առնվազն 2/3-ով: Դաշինքի յուրաքանչրուր անդամ կազմակերպություն ունի մեկ ձայնի իրավունք, որը չի կարող փոխանցվել այլ անդամի:

6.9 Դաշինքի Ասոցացված անդամները չեն կարող մասնակցել որոշոշումների կայացմանը:

6.10 Որոշման հետ համաձայն չլինելու, վերապահում կամ այլ կարծիք ունենալու դեպքում Դաշինքի անդամն այդ մասին նշում է գրավոր, որը կցվում է հանդիպման արձանագրությանը:

6.11 Դաշինքի ասոցացված անդամն իրավունք ունի հայտնել հատուկ կարծիք և/կամ դիրքորոշումը, որը կցվում է որոշման արձանագրությանը:

7. ԴԱՇԻՆՔԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Դաշինքի Հանդիպումները արձանագրվում են: Հանդիպման արձանագրությունը կազմվում է հանդիպման ավարտից հետո եռօրյա ժամկետում՝ առնվազն երկու օրինակով:

7.2 Արձանագրությամբ մասնավորապես նշվում են՝

- Հանդիպման գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
- Հանդիպմանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը,
- Հանդիպմանը մասնակցած անձանց քանակը,
- Հանդիպման օրակարգը,
- Հանդիպմանը կայացած ելույթների հիմնական դրույթները
- Քվեարկության դրված հարցերը:
- Քվեարկության դրված հարցերի քվեարկության արդյունքները,
- Հանդիպմնան ընթացքում ընդունված որոշումները,
- Առկայության դեպքում նաև հիմնական և ասոցացված անդամների կարծիքները:

7.3 Դաշինքի հանդիպման արձանագրությունը ստորագրում են հանդիպմանը մասնակից բոլոր անդամները:

7.4 Դաշինքի հանդիպման արձանագրության օրինակը, համապատասխան պահանջ ստանալու դեպքում, պետք է տրամադրվի Դաշինքի բոլոր անդամներին:

8. ԴԱՇԻՆՔԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Դաշինքի լուծարումը հանգեցնում է դրա գործունեության դադարեցմանն առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց կամ կազմակերպության անցնելու: Դաշինքը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Դաշինքի հիմնական անդամ հանդիսացող անդամների առնվազն 2/3 քվերակմամբ:

8.2 Դաշինքի անդամների ընդհանուր ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

8.3 Դաշինքի վերակազմակերպումն իրականացվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Դաշինքը համարվում է վերակազմակերպված օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

9.1 Սույն Կանոնակարգի գործողության ժամկետը սահմանվում է մինչև դաշինքի գործունեության ժամկետի ավարտը: